ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2013թ. N 29

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 30-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած որոշումը՝ 2013 թվականի հունվարի 30-ին անցկացված մրցույթի վերաբերյալ:
2. Թույլատրել «Հրաչյա և Տիգրան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու «Արմավիր-Մյասնիկյան» միկրոավտոբուսային երթուղին՝ 4 /չորս/ տարի ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013թվականի փետրվարի 1-ից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ***Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ***